Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
մարտի 11-ի N 340 - Ա որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«ՋԻԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

«ՋԻԷՄ Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) հանդիսանում է Երևանի Շինարարների փողոցի N 23/1 հասցեում գտնվող հողամասի սեփականատերը, որտեղ նախատեսվում է իրականացնել 18 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկեր ունեցող ընդհանուր 11 556 քառ. մետր բնակելի մակերեսով բնակելի շենքի կառուցապատման աշխատանքներ:

Շինարարների փողոցի N 23/1 հասցեի հարևանությամբ տեղակայված է 3-րդ կարգի վթարային վիճակում գտնվող Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող շենքը, որն ունի 36 բնակարան մոտավորապես 2000 քառ. մետր մակերեսով: Բնակիչների հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ նոր կառուցվող շենքից բնակիչներին կտրամադրվեն բնակարաններ և կլուծվի նրանց վերաբնակեցման խնդիրը:

Ծրագրով առաջարկվում է Շինարարների փողոցի N 23 հասցեի հարևանությամբ գտնվող, 3-րդ կարգի վթարային շենքի հարակից հատվածում առկա համայնքային սեփա-կանություն հանդիսացող՝ 0.020193 հեկտար մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել ընկերությանը՝ բազմաբնակարան շենքային համալիր կառուցելու նպատակով:

Երևան համայնքի կողմից ուղղակի վաճառքի ձևով տրամադրվող հողամասի և Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող 3-րդ կարգի վթարային շենքի զբաղեցրած հողամասի վրա նախատեսվում է կառուցել 16 408 քառ. մետր ընդհանուր մակերեսով 18 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկերից բաղկացած բազմաբնակարան բնակելի շենք:

Ներդրումային ծրագիրը բաղկացած է 2 բազմաբնակարան բնակելի շենքից: Ծրագիրն իրականացվելու է երկու փուլով:

- Առաջին փուլ (Ա մասնաշենք)

Ընկերությունը պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Շինարարների փողոցի N 23/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից տրամադրել մոտավորապես 2000.0 քառ. մետր մակերեսով բնակելի տարածք՝ Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող 3-րդ կարգի վթարային շենքի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով: Այս փուլում նախատեսում է կառուցել 11 556 քառ. մետր ընդհանուր մակերեսով 18 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկ ունեցող բազմաբնակարան բնակելի շենք, որն ունենալու է 94 բնակարան և 22 ստորգետնյա ավտոկայանատեղի:

- Երկրորդ փուլ (Բ մասնաշենք)

Երկրորդ փուլով նախատեսվում է ապամոնտաժել Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող 3-րդ կարգի վթարային շենքը և տեղում կառուցել 16 408 քառ. մետր ընդհանուր մակերեսով 18 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկ ունեցող բազմաբնակարան բնակելի շենք, որն ունենալու է 126 բնակարան և 52 ստորգետնյա ավտոկայանատեղի: Այս փուլը նախատեսվում է սկսել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շինարարների փողոցի N 23 հասցեում գտնվող 3-րդ կարգի վթարային շենքի բնակիչներին վերաբնակեցնելուց կամ համապատասխան փոխհատուցում տալուց հետո:

Ընկերությունը պարտավորվում է նաև ամբողջությամբ բարեկարգել, կանաչապատել և բնակիչների պահանջներին հարմարեցնել երկու մասնաշենքերի դիմացի հատվածում առկա 750 քառ. մետր մակերեսով տարածքը:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է կառուցել երկու բազմաբնակարան շենք, որոնք կունենան շուրջ 220 բնակարան և 74 ստորգետնյա ավտոկայանատեղի: Ծրագիրը նախատեսվում է ավարտին հասցնել մոտավորապես 5 տարում: Ընդհանուր

առմամբ իրականացվելու են 13.000.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի ներդրումներ:

Ծրագրի իրականացման ընթացքում աշխատանքով կապահովվի 140 մարդ և կներգրավվի մինչև 10 լիցենզավորված կազմակերպություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

12.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ